ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ N24-Ն

<<19>> հոկտեմբերի 2016 թվական գյուղ Գուսանագյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.64084 ՀԵԿՏԱՐ ԱՐՈՏԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գուսանագյուղի համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գուսանագյուղի համայնքի սեփականությունը հանդիսացող 08-036-0224-0238 կադաստրային ծածկագրով գյուղատնտսական նշանակության 0.64084 հեկտար արոտը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 03102016-08-0033, տրված՝ «03» հոկտեմբերի 2016 թվական) գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով մրցույթով, 25 տարի ժամկետով տրամադրել վարձակալության:

2. Հաստատել հողամասի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթի պայմաններն ու վարձավճարի մեկնարկային չափը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 3 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ կողմ ----------

ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆ՝ կողմ ----------

ԽԱՉԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ կողմ ----------

ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՍԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ**

<<19>> հոկտեմբերի 2016 թվական
գյուղ Գուսանագյուղ